


“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՔ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1882

ԹԻԻ 10



ՀՈՒՆՈՒ ԻՆՏԵՆ ԿԱՐԺԱՐԱՆԸ

ԲԱՐԻ ԿԻՆ ՄԸ ԻՆՉ ԿՐՆԱՅ ԸՆԵԼ

Պատանիք և աղջկուհիք գիտեն թէ վարժարանը սոցայոց համար դաստիարակութեան տեղ է ։ Կան վարժարաններ որ պատանեկաց և կամ աղջկանց համար միայն են, կան նաև որ երկու սեռին համար են միանգամայն ։ Ամերիկայի մէջ Հոյեոք լեւրան վարժարան կոչուած վարժարան մը կայ որ աղջկանց և օրիորդաց համար է միայն ։ Թերևս հարցունէք. «Ո՞ր է այս վարժարանը ։» Այս վարժարանին տեղը չէք կրնար գտնել ձեր աշխարհացոյցին վրայ, քանզի վարժարանը փոքր քաղաքի մը մէջ է. բայց կրնաք գտնել Է՛՛՛՛ ուր կը գրտնուի այն քաղաքը ։ Դայեցէք աշխարհացոյցը, գտէք նախ ծովէն անդին այն երկիրը որոյ վրայ լսած էք շատ անգամ, սցփնքն՝ Ամերիկա, և ապա գտէք հոն Միացեալ Նահանգները, և անոր այն նահանգը որ կը կոչուի

Մասաչուսեց ։ Այս նահանգը գտնելով պիտի տեսնէք հոն գետ մը որ այն նահանգէն կ'անցնի հիւսիսէն դէպ ի հարաւ, և կը կոչուի հին բընիկներուն լեզուաւ, «Գոննէգիբըդ ։» Այս գեղեցիկ գետոյն հովանի մէջ, Հոյեոք անուն լեռնէն քիչ հեռու է աղջկանց և օրիորդաց վերայիչեալ վարժարանը ։ Ամերիկայի մէջ շատ ծանօթ է այս դպրոցը, քանզի միշտ 200—300 աղջկուհիք դրաւելով հոն չորս տարի՝ կը պատրաստուին օգտակար ըլլալու այլոց իրենց կենաց մէջ ։ Ահա այս վարժարանին հաստատութեան պատմութիւնը ։

Բաւական տարիներ աւաջ մանկամարդ կին մը, Մէրի Լայըն անուն, ազատութեան պատճառաւ շատ նեղութիւն կրեց դպրոցի ծախքը հագալու ։ Այս կինը ջերմ փափաք ունէր վարժարան մը հիմնելու, ուր աղջկուհիք կարող ըլլային քիչ ծախ-

իւք կատարեալ կրթութիւն առնուլ ։ Մէրի Լայըն գտաւ իրեն շատ համաւստիներ, յորոյ ստակ հաւտքերով կարող եղաւ շինել մեր պատկերին մէջ տեսնուած շէնքին մէկ մասը ։

Ինք եղաւ տեսուչ վարժարանին, և օգնութեամբ ուրիշ կանանց որ այլևայլ ուսմանց և գիտութեանց հմուտ դասատուներ էին, շատ տարիներ կրթեց հարիւրաւոր աղջիկներ ։ Աշակերտք շատ կը սիրէին իրենց տեսուչը, եղան նմանող անոր բարերար և անձնուրաց ոգւոյն, և շատերը վարժարանէն ելլելով եղան ուսուցիչ, իսկ սմանք Հոյեոքի վարժարանին նման վարժարաններ հաստատուցին Ամերիկայի ուրիշ նահանգները, նաև Ափրիկէ և ուրիշ հեռաւոր երկիրներ ։

Մէրի Լայըն մեռաւ 1849 ին, և թաղուեցաւ իւր սիրելի վարժարանին քով ։ Բայց մահը չկրցաւ ջնջել անոր յիշատակը իւր սիրելի աշակերտաց

մտքն , և անոնք որ կարող էին անոր անզը բռնել՝ յառաջ տարին գործը : վարժարանը սիրելի եղաւ Միացեալ նահանգաց Քրիստոնեայ ժողովրդեան , և ժողովուրդն իւր դուստրները հարկընդմիջ դրեալ է հոն կրթուելու , և իւր գրամները տուած է չէնքերն ընդարձակելու և վարժարանին բոլորակբը զարգարելու :

Հոյեք յերան վարժարանը Մէրի Լայընի անուան անմտաց յիշատակի կոթող է , և կը ցուցնէ թէ ինչպէս բարի կին մը որ սրտի մտքը Քրիստոնեայ է՝ կրնայ մեծամեծ բարիք ընել իւր ազգին : Մէրի Լայընի ազգեցաթիւնը չմտաց իւր երկրին մէջ միայն , քանզի կրասանկնա սրտի , Մարտան , կեսարիա , խարբերդ , Մէրտին , Զմիւռնիա և ուրիշ օտար երկիրներ կան կանայք որ թողած են իրենց հայրենիքը ուրիշ երկիրներու ազգկանց հազարներու համար այն կրթութիւնը զոր ստացած են Մէրի Լայընի ետանդուն ջանից շնորհիւ :

ԱՐԳԱՐԻՆ ՃԱՄԲԱՆ
ԿՍՄ
ՔՆԱՅՈՂ ՊԱՀԱՊԱՆՆ

Որ աման մէջ որ վիշա կամ արբան թիւն կայ , այն է հոգեոր պաշտօնէին տունը : Մր. Ալլէն առանց դուռը զարնելու մտաւ , և յառաջ գնաց դէպ ի մեծ և հին սծով զարգարած կերակուրի սենեակ մը , ուր ստոյգ էր թէ պիտի գտնէր աման ընտանիքը : Հոն սեղանի մը քով նրատած էր Մր. Օէն իւր բազուկները կրկնած և դուրս սեղանին վրայ ծրուած , իր կինը ամթուի մը վրայ կրթակին քովը նստած էր , և Պրատմ , մանկամարդ աղջիկ մը , անսնց մէջ անդ : Մր. Օէն և Պրատմ սքեղան զՄր. Ալլէն սղոննելու , բայց կինը չտեսաւ զանի : Կինը կրակին բոցավառ փայտերուն վրայ նայելով խորին մտածութեան մէջ ընկրկնած էր : Բենիամին անոր սիրելին էր , և անոր պատահած թշուառ մահուան կակիծէն ինքզինքը կորուսած էր : Խեղճ մայր , այս սաստիկ հարստաճը անոր կարողութեան վեր էր : Մր. Ալլէն մէկ ձեռքը դրա իրեն երկնցուած գորտուր ձեռքի մը վրայ , և միւսը Մր. Օէնի բարբախտ կործարին վրայ , և զարմայմամբ նայեցաւ անոր երեսը : Քանի մը ժամերու վիշաբ տարիներու չափ մաշեցուցած էր խեղճ մարդը , աչուրներն աղօտացած էին , և յանկարծահաս վիշաբ խոր կնճիռներով անոր երեսին վրայ գրուած էր :

«Բոլոր օրը հոս նստած եմ , յորմէ հեռէ եկաւ այն ցաւալի լուրը : Ինքք բարի աղայ էր , այնպէս սիրելի ,

պատուական և ազնիւ աղայ ,» ըսաւ Մր. Օէն : «Երբ զինքը իւր հայրենեացը նուիրեցի , խորհեցայ թէ այս ընդարձակ երկրին մէջ ոչ մի հայր այնպիսի անզին ընծայ մը առած է : Եւ , Մր. Ալլէն , սիրելի տղան միայն բոսէ մը քնացաւ , ճիշդ մէկ փոքրիկ բոսէ մը , իւր պահպանութեան կայանին մէջ , գիտեմ թէ բոլոր այս էր , քանզի Բենիամին երբէք չէր նիրհեր պարտականութեան մը վրայ : Գիտեմ թէ միայն վայրկեան մը նիրհեց : Ինքք գեռ մանուկ էր , և ոչ զօրաւոր , ո՛հ , զուակր , նա ինծի չափ բարձրահասակ էր և միայն 18 տարեկան , և արդ , հրացանի բռնեցին զնա , քանզի ի քուն գտան գիշերային պահպանութեան աստեղ :» Մր. Օէն այս բառերը շատ ցած ձայնով արտասանեց , և գրեթէ անզնի էր անոր ձայնը մտաց յուզմունքէն : «Ես չէի կրնար դէմ կենդ սրբոյն հայրենապետական ետանդեանը ,» շարունակեց Մր. Օէն , «երբ զինուորայնութեան կին մէջ մտնելէն առաջ ինծի ցտաւ , չ'այր , ես պիտի ամենամ երբ այր մը ըլլամ խորհելով թէ երբէք չգործածեցի այս մեծ աջ բազուկը յօգուտ իմ հայրենեացս , երբ նա կարօտ էր անոր . աւելի կ'ընտրեմ անգամայն ըլլալ քան պահել բազուկս մահին համար : Գնա ուրեմն սրբեանկ իմ ,» ըսի ես և Ստատած քեզ պահէ : Ստատած պահած է զայն կարծեմ , Մր. Ալլէն :» Խեղճ մարդն այնպէս արտասանեց այս վերջին խօսքերը որ կարծես թէ իւր համարման հակառակ սիրաւոր էր տարակուսէր անոր վրայ : «Իր աչքին բերին պէս , Մր. Օէն , այս մասին մի տարակուսիր» ըսաւ Մր. Ալլէն : Պրատմ անսնց մօտը նստած մտիկ կ'ընէր , տիգոյն և ճերմիկած երեսով մը , նա բնաւ արտասուք թափած չէր սցօթ , և իր երեսն այնպէս հանդարտ էր , որ ոչ որ կը նշմարէր անոր սրտին դառն ցաւը : Աղջիկը զբազած էր ընտանեկան հոգեբով զբա մօրը այս վիճակը ձգած էր անոր վրայ : Այս միջոցին Պրատմ ելաւ սենեակին դուռը բանար . որ կամայ մը կը զարնուէր : Եկողը գրայի մ'էր , և նամակ մը կը բերէր : «Նամակը եղբորմէն է ,» միայն կրցաւ ըսել : Նամակը ննջեցեայէ մը եկած պատգամի մը նման էր : Մր. Օէն չէր կրնար կնիքը քակել իր գողօժուն մասներով , ուստի երկնցուց զայն Մր. Ալլէնի : Պաշտօնեայն բացաւ զայն , և ըստ ինդրանայ Մր. Օէնի կարգաց այսպէս .

«Սիրելի հայր իմ .

Երբ այս նամակը ձեզի կը հասնի , ես յախտեալանութեան մէջ

պիտի ըլլամ : Ի սկզբան մահն ահաւոր երեցաւ ինձ , սակայն հիմա մահուան վրայ այնչափ խորհած եմ որ այլևս սարսափ չտար ինձ : Կ'ըսեն թէ զիս պիտի չկապեն , ոչ ալ աչքս գոցեն , այլ պիտի թողուն զիս անվեհերութեամբ իմ մահուանս գիտել : Խորհեցայ , հայր իմ , որ կրնար ըլլալ որ մահը իմ հայրենեացս համար պատերազմի գաշտին մէջ պատահէր , և թէ երբ յայնժամ էլնայի փառաւոր մարտի մը մէջ պիտի էլնայի . սակայն ծանր է շուն մը պէս զարնուիլ սրպէս թէ հայրենիքը մտանելու յանցանքի մը համար , մեռնիլ պարտքի մը մէջ անհոգ գտնուելու համար : Ո՛հ , հայր իմ , կը գործաւորեմ թէ նոյն իսկ այս խորհուրդը ինչպէս չմեղաներ զիս :

Գիտեք , հայր իմ , թէ ճէյմսին մօրը խստացայ անոր ազուն հոգաւորի : Եւ երբ ճէյմս ակարացաւ , ինչ որ կրնայի ընել անոր համար , ըրի : Երբ հրամայուեցաւ անոր պատերազմական կարգը մտնել մինչ գեռ յօրացած չէր , և այն գիշերուան նախընթաց օրը իմ բեռէս զատ նաեւ անոր բոլոր բեռը ես կրեցի : Գիշերուան վրայ վազելով զայնիք , թէ և բեռը սկսաւ ծանր կոխել իմ վրաս : Միւս ամէնքն ալ յոգնած էին , և եթէ ես երբեմն ճէյմսին օգնած չըլլայի , նա ճառքան պիտի էլնար : Երբ բանակը հասանք , ես բոլորովին յոգնած էի , և գիշերապահութեան կարգը ճէյմսին էր , և ես անոր անզ պահպանութիւն ըրի , բայց շատ յոգնած էի , հայր իմ , չէի կրնար ինքզինքս արթուն պահել մինչև անդամ եթէ հրացան մ'ուզուած ըլլար կործարիս : Այսպէս քունս տարաւ , և ես չգիտայայ բանը մինչև որ շատ ուշ էր :

«Օրհնեալ ըլլայ Ստատած ,» ընդմիջեց Մր. Օէն յարգանք . «Ես գիտելի թէ Բենիամին իր կայանին մէջ քնացող աղայ չէր :»

Յետոյ Մր. Ալլէն սկսաւ շարունակել նամակին ընթերցումը :

«Դնձ ըսին այսօր թէ կարճ միջոց մը պիտի սրուի ինձ , և մեր բարի հաղորդակեալը կ'ըսէ թէ ժամանակ է հիմա գրելու : Թողութիւն ըրէ աւտոր , սիրելի հայր իմ , ինքք կ'ընէ միայն ինչ որ պարագն է : Նաեւ մի գրէք իմ մահուանս պատճառը ճէյմսին վրայ . խեղճին սիրտը կտորած է , և բան մը չկրնար ընել , բայց միայն աղաչել որ իմ անզս ինքք մեռնի :»

«Չեմ կրնար գիմանալ մօրս և Պրատմին վրայ խորհելու : Մխիթարէ զանոնք , հայր իմ : Ես կը մեռնիմ իրր քաջ պատանի մը , և երբ պա-

տերադրը կը վերջանայ, անոնք (մայրս և Պրատը) պիտի չամշանն իմ վրայով: Աստուած օգնէ ինձ: Մնաս բարեաւ, հայր: Աստուած մօտ և սիրելի կը թուի ինձ, և վատահ եմ թէ ինքը զիս իր, և իմ Փրկչիս քու վր պիտի առնէ աւելի լաւագոյն — լաւագոյն կեանքի մը մէջ:—

Մեծ հեկեկանք մը բրգաւ Մր. Օհնի սրտէն, և «Ամէն» ըսաւ նա ծանրութեամբ:—

«Վերջապահին ատենը պիտի չտեսնեմ կովերուն սրտէն ատն դառնայր: Տէյդի, Պրինտը և Բէդ, նաև ծեր Պիրլին իր գոմէն ինձի համար պիտի բաւալէ: Իմ քաղցրիկ քոյրս, Պրատը, ինձի պիտի սպասէ ճեմալիքին մէջ, բայց ես պիտի չզամ յախաւան: Աստուած օրհնէ ձեզ ամենքդ: Ներէ, հայր, քու Բենիաւ մինիդ:»

(Երգումս է)

ԲՈՒՍ

Գեղեցիկ պատկերին մէջ որ այս յօդուածին հետ է կը տեսնուին զարմանալի ձկուներ և ուրիշ ծովային ճճիք որ կը խաղան այնպիսի բաներու մէջ որ կը թուի թէ են ծովային ծաղիկներ: Այս փայր ծաղիկներ են ասաղան, բայց և այնպէս այն գեղեցիկ ասաղան ձկն չեն ամենին շաղկ, թէպէտ այնպէս կարծուած էին երկար ատեն: Մարտիկա ծնած Գաղիացի մը, Բէյրութէլ անուն, 1723 ին սկսաւ նախ քննել ծովային բուսայր, և երկար քրննութեան և զխտորութեան ետքը գտաւ որ ծաղիկ կարծուած բուսոր ոչ թէ բոյս էր կամ անկային նիւթ

մը, այլ կենսաւոր էակ, այսինքն անասուն կամ ճճի: «Գրի», կըրտէ վերոյիշեալ հեղինակը, «բուստ կոչուած ծաղիկներ ծովի ջրով լեցուն ամաններու մէջ, և տեսայ որ այն որ ծաղիկ կը կարծուէր՝ անասուն էր, քանզի անասնիկը սկսան շարժիլ: Երբ ամանը դրի մեզմէ կրակի վրայ, այն փոքրիկ անասունը սկսան աւրածուիլ, և երկնցունել իրենց ոտուրները զորս առաջ ես և այլք ծաղիկ թերթիկը կը համարէիք:» Ծատքիչեր հաստատային ի սկզբան թէ խարուած էին, և թէ այն ծաղիկներն էին սրգարե անասուն. բայց

քիչ ժամանակ ետքը հաստատուեցաւ թէ այնպէս էր, և հիմա յայտնի է թէ ավիանոսի մէջ գտնուած բուսոր գործ են հազարաւոր մանր մանր ճճիներու որ կը ծնանին, կ'ապրին և կը մեռնին բուստի գեղեցիկ ձեւերուն մէջ:

Բուսոր այլեայլ տեսակ են. կայ սպիտակ, թուխ և կարմիր բուստ: Այս վերջինը շատ գեղեցիկ է, և անկէ կը շնտախն ուրուք և ուրիշ զարդեր: Բուստ կը գտնուի կարմիր

տեղէն բաժնեցին և իրարու կից մէյմէկ տուն շինեցին: Այսպէս տղայք մօտ դրացի ըլլալով միշտ չի միտնին կը խաղան: Անոնք իրարու ընկերութեան շատ կարօտ են, զի ո՛չ մէկը փոքրիկ եղբայր ունի որուն հետ կա-

րող բլայ խաղալ: Խօսքով երկու եղբայր ունի երկինքը, Արմենակ և Մելքոն. իսկ Արտէն հինգ, Գարեգին, Տիգրան, Հայկակ, Գիսակ և Եղուարդ: Թէ Արտէն և թէ Խօսքով մէկմէկ մեծ եղբայր ունին, որք քա-

նի մը տարի առաջ մէկտեղ կը խաղային, ապա կայն հիմա անոնք մեծցած են, շատ գործ ունին և խաղալու ժամանակ չունին, բայց անոնց բարեկամութիւնն անկեղծ, սերտ և կը յուսամ թէ մշտնջենաւ որ է: Խցի թէ Արտէն և Խօսքովին բարեկամութիւնն ալ այնպէս ըլլար: Արտէն և Խօսքով իրարու հետ շատ սիրով և ուրախութեամբ կը խաղան: Ծատ անգամ իւրենց փայտէ ձիերը հեծած սարափղին չորս կողմը կը շրջադառնին. մերթ բարեկամութիւնը կը տեսնուին, մերթ ծառերուն գաղտնիքը կ'ընդունաւ նուշահամ սրտուղներ ուտելու, և մերթ աւազանները կը մտնեն պաղ ջրով լողալու: Երբեմն վարժապետի և աշակերտի խաղ կը խաղան, և առտեսաբանութիւններ կըրեն: Արտէնին հօրը գրած «Սերէ Հայը», կամ Պէշիկթաշեանի «Ընդ տաւեզը ինչ կայ սիրուն» երգերը կ'երգեն, և երբեմն փայտէ զէնքեր առած պատերազմի դաշտը կ'երեն:



ԲՈՒՍ

ծովուն և Միջերկրականին մէջ: Խտղագական ավիանոսի մէջ ամբողջ կղզիներ կը կենան բառեայ ապառաժներու վրայ որ ծովուն երեսէն մինչև 120 սար վար կ'երթան: Մեր պատկերին մէջ կը տեսնուին բաւայ երկու կամ երեք տեսակներ:

ԱՐՄԷՆ ԵՒ ԽՈՍՔՈՎ

Արտէն ու թնուկէս և Խօսքով Եօթը տարեկան տղաքներ են: Անոնց հայրերը քաղաքէն 20 բուլէ հեռու ընդարձակ պարտէզ մը առնելով մէջ-

Միշտ սիրով և միարանութեամբ կը խաղան: Միայն տարին մէկ կամ երկու անգամ կը պատահի — գաղտնիք է մարդ չըտէ — որ իրարու կը սրգոյին, բայց միայն հինգ բուլէ կը տեսնան անոնց սրգոյիլը, ետքը նորէն իրարու ձեռք թոփփելով կը հաշտուին: Կը յուսամ թէ պիտի աշխատին որ այսուհետեւ բնաւ չսրգոյին:

Քանի մը որ առաջ Արտէնին մայրը պատահանէն տեսաւ որ երկու տղայք արտին մէջ ամենայն սրագութեամբ փայտէ ձիերը կը քշէին, և յանկարծ ծունկի վրայ գալով քանի

մը վայրկեան հանդարտ կը կենային, յետոյ դարձեալ ոտքի ելլելով ձի կը քշէին: Քանի մը ժամ այսպէս շաւրանակեցին: Հետեւեալ օրը երկուքը մէկտեղ Սուրբ գիրքը աւնելով Արտակնին մօրը սենեակը գացին: «Մայր», ըստ Արտակնի, «մենք հոս պիտի կարգանք և ազօթենք»: «Ազգէկ կ'ընէք», ըստ մայրը, «ի՛նչ պիտի խնդրէք Աստուծմէ»: «Կեցիք խնդրենք և տեսնենք թէ կը կատարուի», վերջը կ'ըսենք թէ ի՛նչ էր մեր խնդրուածը», ըստ խտրով քանձիմարով: Բայց կարծեմ գազանիք պահելու կողմանէ շատ վարդեալ չէին, քանզի ազօթքը ընելէ առաջ երկուքը մէկէն ըսին, «Մենք Աստուծմէ հրաշք մը ընել պիտի խնդրենք»: «Ի՛նչ է ձեր ուզած հրաշքը», ըստ Արտակնի մայրը: «Կուզենք որ», ըսին, «մեր արտին մէջ յանկարծ տուներ, պողպտի ծառեր, ջուրի աղբիւրներ, ձիեր ու կառքեր և շատ մը սկիւ բուսնին»: «Բ՛ն», ըստ մայրը, «կը յուսամ թէ Աստուած ձեր խնդրած հրաշքը կը կատարէ եթէ անոր պայմանները ընդունիք, բայց ս'չ թէ ձեր փափաքածին չափ յանկարծ»: «Ի՛նչ է պայմանները», գոչեցին երկուքը մէկէն:

«Աստուած կ'ուզէ որ դուք շատ ժրպան և յառաջագէժ ըլլաք, որպէս զի երբ մեծնաք, ուսեալ և դործունեայ մարդիկ ըլլաք, և չփասնէք ինչ որ կը շահիք: Եւ երբ բաւական ստակ գրդէք, բահ և բրդ ու բանւորներ կ'առնէք կուգաք, և ձեր փափաքած հրաշքները կը սկսին մէկէ մէկի կատարուիլ: Բայց պէտք է որ այժմէն սկսիք աստուածապաշտութեան արարքներ ըլլալով այդ հրաշքներուն կատարմանը համար պատրաստութիւններ տեսնել:»


«Բ՛ն», ըսին երկուքը մէկէն ուրախութեամբ ծափ զարնելով, «ուրեմն, մենք արդէն սկսած ենք, քանզի երէկ մինչև երեկոյ արտին մէջ ազօթք կ'ընէինք, և մեր մեղքերը կը խտատվանէինք: Բնաւ մեղք մը չմնայ որ չխտատվանէցանք:»

Շ. Լ. Շ.

ԳԵՏՆԱՓՈՐ ՇԻՐՈՒՄԻ Ի ՀՌՈՄ
(Շարանակութիւն)

Տղայոց Ա. Կատարելի Սեպտեմբերի թուոյն մէջ խօսեցանք համառօտի այս շիրիմներուն մասից, փողոցայ, դերեզմանայ վրայ, այլովքն հանգերձ: Այս անգամ պիտի խօսինք նկարներու և արձանագրութեանց վրայ որ կը տեսնուին այն գեանափորներուն մէջ: Արդ՛հետև ասոնց մէջ փորուած մատուներ և գերեզմաններ չեն կրնար լոյս առնուլ դուր-

սնն ամէն կողմ նշաններ որ կը ցուցնեն թէ Փրկչին այն խտատմը մը խիթարութիւն եղած էր այն գերեզմաններուն մէջ թողելոյ հազարաւորներուն, երբ կ'իջնէին մահուան ճորոյն և սառերին մէջ: Դեռ ազանին որ բերանը ձիթեայ ճիւղով կը նկարուէր «In Pace» ի բով՝ կը ցուցնէր թէ ննջեցեալը գտած էին հանգիստ Ա. Կատարանին տապանին մէջ:



ԿԱՏԱՐԵՂ

Նոյնպէս մեր երկրորդ պատկերը կը ցուցնէ գեանափորին մէջ պատի մը վրայ նկարուած Բարի Հովիւր իւր գառազանով սլաքներուն մէջ: Բարի Հովիւն պատկերը գեանափորին մէջ հազարաւոր տեղեր նկարուած է: Շատ տեղեր նկարուած կը տեսնուի նաև շահ: Չուկը Քրիստոսնէկոյ մէջ էր խորհրդաւոր նշան, վասն զի յունարէն ձուկ բառին զիբերը կը կազմեն «Յիսուս Քրիստոս», որչի Աստուծոյ, Փրկչի՝ բառերուն սկզբան տառերը:



ՅԻՍՈՒՍ ԿՐԻՍՏՈՍ

Գիտողութեան արժանի է որ բոլոր գեանափորին մէջ չկայ ամենևին կոյտ Մարիամու պատկեր: Արձանագրութեանց մէջ յաճախ կը տեսնուի գերեզմաններուն վրայ լատիներէն սա երկու բառը, IN PACE, որ կը նշանակէ Է Խաղաղութիւն: Երբ մեր Տէրը պիտի բաժնուէր իւր աշակերտներէն, ըստ. «Իմ խաղաղութիւնս կը թողում ձեզ»: Գեանափորին այցելութիւն ընողք կը տես-

նեն ամէն կողմ նշաններ որ կը ցուցնեն թէ Փրկչին այն խտատմը մը խիթարութիւն եղած էր այն գերեզմաններուն մէջ թողելոյ հազարաւորներուն, երբ կ'իջնէին մահուան ճորոյն և սառերին մէջ: Դեռ ազանին որ բերանը ձիթեայ ճիւղով կը նկարուէր «In Pace» ի բով՝ կը ցուցնէր թէ ննջեցեալը գտած էին հանգիստ Ա. Կատարանին տապանին մէջ:

ԺԱՄԱՆԱԿՆ ԼԱՇՈՒՆԸ

«ՊՈՒՆ ԲԱՆ Կը հաշուենք հիմա տասն տասն կամ հարիւր հարիւր, ինչո՞ւ համար նաև ժամերը և րօպէները չենք հաշուեր այսպէս: Ինչո՞ւ համար փոխանակ վախճանի հարիւր րօպէն չընենք մի ժամ», հարցոյց մտաբեր հանճարեղ պատանի մը: Այս այս չենք կրնար ուրիշ պատճառ ցուցնել բայց միայն հին Յոյն աստեղագէտը Հիպպարքոս, որ ծաղկեցաւ յերկրորդ դարուն նախքան զՔրիստոս, և ըստ օրինակին Բարեկարգոյ ժամանակը կը հաշուէր այնպէս՝ ինչպէս կը հաշուենք մենք հիմա: Գեառոյ Պապմէսոս որ ծաղկեցաւ յամի Տեառն 120, հետեւեցաւ Հիպպարքոսի, և այսպէս այն սովորութիւնը դարէ ի դար եկաւ մինչև աս. մեզ: Քան զայս յուսողոյն եղանակ ոչ ոք գտաւ ցարդ, բայց հանճարեղ մարդ մը կրնայ թերևս ճամբայ մը գտնել տասնորդական դրուածութեամբ հաշուելու ժամանակը, և այնպէս ընել որ օրուան ժամերն հաշուելը միօրինակ ըլլայ ամէն տեղ:»

Փորձիկ տղայ մը կ'ուզէր, բայց չէր համարձակեր պտուղ քաղել ծառէ մը որուն մօտեւնալ արդեալ չէր հայրը: «Ինչո՞ւ համար կը վախնաս», ըստ անոր չար ընկերը. «Եթէ հայրդ իմանայ, այնպէս բարի է որ չխտատուենք գրեզը:»

«Այո», ըստ բարի տղան, «գիտեմ, և այս է պատճառ որ չեմ ուզեր քաղել: Հայրս մշտնջողն է՝ և բայց է՛ւ և Լուսնայ երբ զխնայ թէ իւր պատուէրը չպահանջի:»

Ամերիկայի Մեխիմոսարց ընկերութեան կողմէն
Թմրաղէր ձ. Ք. ԿՐԻՆ
Ֆիլաճանճըր եօղուշու, Ամերիկայի Իսն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՅՈՐ ՊՈՅԱՆՆԵՆ